ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- նոյեմբերի 2020 թվականի №---Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի №437Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԲԱՐԻ ԱՐԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի նոյեմբերի 6-ի գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով տասնհինգ ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 30-ի №437Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Բարի Արև-1» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0627 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0627 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը: Միաժամանակ, Ընկերությունը դիմումին կից ներկայացրել է Կայանը չկառուցելու հիմնավորումները, ըստ որի՝ հաշվի առնելով կորոնավիրուսային հիվանդության հետ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության և Պարետի համապատասխան որոշումները, սույն թվականի հունվարից մինչև հուլիս ամիսը կարողացել է նախագծային և շինարարական աշխատանքներն իրականացնել մասնակիորեն: Ընկերությունը նշել է, որ իր աշխատանքների ժամանակավոր դադարեցման վրա ազդեցություն են ունեցել նաև մի շարք հանգամանքներ, մասնավորապես՝ Չինաստանում արտակարգ դրություն հայտարարելու փաստով պայմանավորված՝ փաստացի հնարավորություն չի ունեցել վերսկսել առաջատար մատակարարների հետ բանակցությունների գործընթացը, քանի որ մատակարարումը նախատեսված ժամկետում անիրատեսական էր, արտակարգ դրության հայտարարմամբ Ընկերության հետ համագործակցող բանկերը ժամանակավորապես դադարեցրել են խոշոր ծրագրերի, այդ թվում՝ էներգետիկ ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանն ուղղված ծրագրերի

ֆինանսավորումը, որի արդյունքում դանդաղել են այդ ծրագրերի ֆինանսավորման նպատակով համագործակցող բանկերի հետ բանակցությունները: Ընկերությունը նշել է, որ համաճարակի շուրջ ներկայիս ստեղծված իրավիճակի և դրա զարգացման անկանխատեսելիության արդյունքում հնարավոր է անորոշ ժամկետով երկարաձգվի բանկերի կողմից վարկավորման գործընթացը, ինչի արդյունքում անհնարին կլինի արևային էլեկտրակայանի կառուցման աշխատանքների վերսկսումը և ավարտը սահմանված ժամկետներում: Շինարարական աշխատանքների վրա ազդելու է նաև սեզոնային գործոնը՝ ձմռան ամիսները: Ընկերությունը նշել է, որ սույն թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողություններով պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությունը, ինչպես նաև սույն թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ կորոնավիրուսային հիվանդության դեպքերի կտրուկ աճը և հետագա զարգացումների անկանխատեսելիությունը հաշվի առնելով, ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք չէին կարող կանխատեսվել կամ կանխարգելվել Ընկերության կողմից, չեն գտնվել և գտնվում Ընկերության վերահսկողության ներքո, ինչպես նաև պայմանավորված չեն եղել վերջինիս անզգուշությամբ կամ բացթողմամբ,

բ) Հանձնաժողովը 2020 թվականի նոյեմբերի 13-ի №ՍՇ/34.1-Մ4-3/4626-2020 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ «Բարի Արև-1» արևային էլեկտրակայանի կառուցման պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հարցի գնահատման համար անհրաժեշտ է ներկայացնել համապատասխան հիմնավորումներ, որին ի պատասխան ընկերությունը որևէ հիմնավորում չի ներկայացրել,

գ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի.

- 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,

- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Կարգի իմաստով ֆորս մաժոր է համարվում ցանկացած հանգամանք կամ դեպք (դրա հետևանք), որը հանգեցրել է (հանգեցնում կամ կարող է հանգեցնել) լիցենզավորված անձի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման և միաժամանակ բավարարում է հետևյալ պայմաններին.
  1) չի գտնվում լիցենզավորված անձի վերահսկողության ներքո.
  2) լիցենզավորված անձը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցները և ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար.
  3) լիցենզավորված անձը տեղեկացրել է Հանձնաժողովին իրազեկվելուց հետո հնարավորինս սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան այդ մասին իրազեկվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,

դ) Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, գտնում է, որ ԼԷ №0627 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու վերաբերյալ Ընկերության հայտը ենթակա է բավարարման, իսկ երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցելու հիմքերը բացակայում են: Մասնավորապես, Կարգի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Տվյալ դեպքում Ընկերությունը չի հիմնավորել Կայանի կառուցման՝ իր պարտավորության չկատարումը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մինչդեռ Ընկերությունը, որևէ կերպ չի ապացուցել և չի հիմնավորել

իր կողմից մատնանշված հանգամանքների առկայությունը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում: Մասնավորապես.

- Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել թվարկված հանգամանքներն և դրանց ուղղակի առնչությունը լիցենզիայով ամրագրված՝ Կայանի կառուցման պարտավորության կատարման անհնարինության հետ, մասնավորապես՝ չի հիմնավորել ֆորսմաժորային հանգամանքներով պայմանավորված չինական մատակարարների պատճառով Կայանի կառուցման անհնարինությունը և այլընտրանքային տարբերակների բացակայությունը, չի հիմնավորել բանկային կամ այլ կազմակերպություններից վարկային միջոցների չտրամադրման պատճառները և այլն, ինչպես նաև չի հիմնավորվել Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ կամ ռազմական դրության վերաբերելիությունը սահմանված ժամկետում Կայանի կառուցման պարտավորության կատարման անհնարինությանը,
- Ընկերությունը նշել է, որ ձեռնարկել է ուշացումները կանխելուն և բանակցությունները վերսկսելուն ուղղված անհաժեշտ միջոցներ դեռևս 2019 թվականի դեկտեմբեր ամսվա առաջին կեսին, մինչդեռ Ընկերության կողմից հիշյալը ևս չի ապացուցվել, ինչպես նաև չի հիմնավորվել այն, որ Ընկերությունը ձեռնարկել է բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Տասնհինգ ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի նոյեմբերի 30-ի «ԲԱՐԻ ԱՐԵՎ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Բարի Արև-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №437Ա որոշմամբ «ԲԱՐԻ ԱՐԵՎ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0627 լիցենզիայով ամրագրված «Բարի Արև-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգել տասնհինգ ամսով՝ որոշման մեջ «2020 թվականի դեկտեմբերի 1-ը» բառերը փոխարինելով «2022 թվականի մարտի 1-ը» բառերով:

2. Ընկերությանը՝ ԼԷ №0627 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի նոյեմբերի 1-ի COD/1463 գրությամբ Հանձնաժողով ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 6 250 000 (վեց միլիոն երկու հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2022 թվականի ապրիլի 15-ը գործողության ժամկետով:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի դեկտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- նոյեմբերի 2020թ.